«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ռազմահայրենասիրական դաստիարակություն
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	**Ալիկ Վարազդատի Մկրտչյան**
ՄԱՐԶ	ք. Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**«Ն.Խաչատրյանի անվան հ.113 մ/դ» ՊՈԱԿ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն..... 2

Ներածություն..... 3

Գլուխ.1 Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը ՆԶՊ ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում

1.1 Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ որպես համաժողովրդական նպատակ.....6

1.2 ՆԶՊ-ն՝ որպես ռազմահայրենասիրական դաստիարակության առարկա.....10

1.3 ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ռազմահայրենասիրական գիտակցության զարգացման մեթոդներն ու եղանակները.....17

Եզրակացություններ և առաջարկություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գոյություն ունի մի ուժ, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին՝ հոգով, մտքով և արյունով: Դա ազգային սերն է: Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել այն»: *ՐԱՖՖԻ*

Թերևս ճիշտ էր մեծն վիպասան Հակոբ Մելիք-Հակոբյանը, երբ ասել է, որ հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից: Դժվար կլինի սիրել ու պաշտպանել հայրենիքը, երբ ոչինչ չգիտես նրա անցյալի, ներկայի ու ապագայի տեսլականի մասին: Հենց այս նպատակին է ուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում, որն իրականացվում է այդ թվում ՆԶՊ ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում:

Մատաղ սերնդի ռազմահահայրենասիրական դաստիարակությունը կրթական համակարգի կարևորագույն խնդիրներից մեկն է: Այդպես եղել է մեր ողջ բազմադարյան պատմության ընթացքում՝ պայմանավորված մեր պայքարող, չհանձնվող, ազատասեր տեսակով: Դեռ վաղնջական ժամանակներից քերթողահայր Մովսես Խորենացին Հայկի, Արտաշեսի, Տիգրանի ու Արա Գեղեցիկի օրինակն է դրոշմել մեր՝ հայերիս գիտակցության ու գենի մեջ, միջին դարերում Սասունցի Դավթի օրինակն է եղել ազգի ռազմահայրենասիրության առհավատչյան, իսկ ավելի ուշ հայ գեղարվեստական արձակի հսկաներն են իրենց պատմավեպերով ցույց տվել հայրենասիրության վառ օրինակներ, որոնք ժամանակի երիտասարդ սերնդի մեջ բորբոքել է հայ մնալու և հայականությունը պահպանելու գաղափարները: Աղասին, Սամվելը, Խենթը, Գևորգ Մարզպետունին, Պապ թագավորն ու Արշակ Երկրորդը իրենց հայրենանվեր գործելակերպով այսօր էլ շարունակում են պատգամել մատաղ սերնդին հայ մնալ, պահել ազգային ու կրոնական «Եսը», որևէ պարագայում չուրանալ հայրենիքը:

Հզոր է հայ ժողովրդի ռազմական անցյալը, հզոր են մեր հերոսները: Դարեր ի վեր հայը ռազմիկ է եղել, երբեք նախահարձակ չի եղել, միշտ պաշտպանել է իր ունեցածը, աչք չի դրել ո'չ ուրիշի հարստությանը, ո'չ հողին, ո'չ այլոց կանանոցին: Հենց այս բարոյական ու հզոր օրինակն է, որ պիտի ավանդվի մատաղ սերնդին, ահա այս արժեքները պիտի դրվեն նոր սերնդի բարոյական ու ռազմահայրենասիրական դաստիարակության հենքում:

Կրկին գալով հայրենաճանաչության կարևոր պատգամին՝ շեշտենք, որ այս առումով իր առանցքային դեր ու կարևորությունն ունի հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր ծրագրով նախատեսված ՆԶՊ առարկան: Այս առարկայի դասավանդման շրջանակներում սովորողը զինվում է հայրենասիրության հսկայական չափաբաժնով, սովորում ժամանակակից ռազմարվեստի տեսությունը, այդ համատեքստում գնահատում հակառակորդ դիտարկվող երկրների ռազմական ներուժը, ինչը, կարծում ենք անչափ կարևոր է: Ժաղովրդական իմաստությունն ասում է. «Ձեր ընկերներին մոտ պահեք, իսկ ձեր թշնամիներին՝ էլ ավելի մոտ»: Հենց այս գիտակցումը պետք է լինի առանցքային այսօրվա սովորողի համար: Գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով զինված մեր մատաղ սերունդը պետք է քաջ գիտակցի, որ հենց այդ գիտելիքն ու կարողունակությունն է այն զենքը, որով կարելի է պաշտպանել հայրենիքն ու հայականությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է սովորողների մեջ դաստիարակի հայրենասիրություն և դրա վրա հիմնված արժեքային համակարգ, ինչը, մեր համոզմամբ, հույժ կարևոր է՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները:

Հետազոտության խնդիրը: Սույն հետազոտության խնդիրն է կարևորել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հենքի վրա դնելու, սովորողների մոտ ռազմարվեստի

վերաբերյալ գիտելիքներ ու գործնական կարողություններ ձևավերելու տեսանկյունից:

Հետազոտության նպատակը: Հետազոտության խնդիրն է ցույց տալ ՆԶՊ ուսումնական առարկայի շրջանակներում ուսուցչի կողմից ընտրված մեթոդների ու եղանակների արդյունավետությունը՝ սովորողների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության խթանման համատեքստում:

Գլուխ.1 Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը ՆԶՊ ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում

1.1 Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ որպես համաժողովրդական նպատակ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը կյանքի ամենանպաստավոր շրջափուլերն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում՝ պամանավորված արդի մարտահրավերներով:

Անշուշտ, հայրենիքը միայն հողն ու ջուրը չէ, ինչը պետք է անվերապահորեն պաշտպանել, հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որը հարկավոր է ծաղկեցնել, շենացնել ու զարգացնել: Հայրենիքը պիտի յուրաքանչյուր հայի համար լինի հպարտության ու պատվի խորհրդանի, այն պետք է սիրել ոչ թե խոսքով, այլ հայրենանվեր գործերով: Կարծում ենք, որ այս գաղափարները պետք է դրվեն մատաղ սերնդի դաստիարակության հենքում, և դպրոցն այս առումով ունի իր առյուծի բաժինը: Այս գիտակցումն այսօր, իհարկե, ունի համաժողովրդական բնույթ, քանզի հայրենասիրական դաստիարակությունը նաև հայ ընտանիքի մեծագույն հիմնասյունն է:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում՝ այդ թվում ՆԶՊ-ի, անհրաժեշտ է և հույժ կարոոր սովորողների մոտ արմատավորել ազգային ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացումը, մեծանուն հայերի, ռազմական գործիչների, մեր գիտնականների ու զորավարների նկատմամբ անսահման հարգանքը:

Աներկբա է, որ հայ դպրոցը դարեր ի վեր բուն գիտելիքի հաղորդման, կարողությունների և ունակությունների զարգացմանը զուգնթաց գործունեություն է

ծավալել սովորողներին ռազմահայրենասիրական դաստիարակություն տալու, հայրենիքին ծանոթացնելու, հայականությանը մոտ պահելու և հային արժանի արժեհամակարգ ձևավորելու առումով: Այսօր այս նպատակներին հասնելու համար մեծ աշխատանք է տանում ՆԶՊ առարկայի ուսուցիչը, ում հիմնական նպատակներից են.

- նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,
- սովորողների կողմից կրճատել տարբեր օրինախախտումներն ու նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,
- պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը,
- բարձրացնել աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ,
- յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը,
- նպաստել դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեության մշտական կատարելագործմանը,
- ծանոթացնելու սովորողներին ռազմական գործին, հարևան պետությունների բանակային ու ռազմական առանձնահատկություններին, կարողություններին:

Անշուշտ, այս ամենը անչափ կարևոր է՝ հաշվի առնելով պատմաքաղաքական իրավիճակը և մեր երկրի առաջ կանգնած մարտահրավերները: Սովորողը, ով ապագա զինվորն է, հայրենիքի պաշտպանը, պետք է քաջ գիտակցի, թե հանուն ինչ արժեքների է պայքարում, ինչ կարևոր առաքելություն կա իր վրա դրված: Ավելին՝սովորողը պետք է հասկանա նաև, որ միայն զենքով չեն պաշտպանում

հայրենիքը. հայրենիքը նախ և առաջ պետք է հզոր լինի իր մարդկային ներուժով, ամեն մեկը պետք է գիտակցի, որ այսօրվա ստացած կայուն գիտելիքն ապագայում կարող է ներդնել իր երկրի զարգացման, գիտության ու տեխնիկայի առաջընթացի համար՝ թիկունքն ամուր պահելու և զինվորի մեջքն ամրապնդելու նպատակով:
Ցավալի իրողություն է, որ այսօր դեռահասների մոտ գերազանցում են նյութական հարստությունը և արժեքները: Չնայած դրան, անցումային շրջանի բոլոր դժվարությունները չպետք է պատճառ դառնան սովորողների հայրենասիրական դաստիարակության դադարեցման համար: Սովորողի համար պետք է տեսանելի ու շոշոփելի դարձնել հայրենասիրական դաստիարակության դերը: Չէ որ բարոյական և հայրենասիրական կրթությունը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է, որի վրա է հիմնված յուրաքանչյուր պետության կենսունակությունը:

Գիտակցելով այս խնդրի հրատապությունը ներկա փուլում՝ անհրաժեշտ է հասկանալ, որ դպրոցահասակների անհատական կազմավորումը պարզապես անհնար է առանց հայրենասիրական զգացմունքների դաստիարակության: Հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի և մարդկության առկայության վրա `որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու, ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո և հարգանքի դրսևորումներով դեպի իր հայրենի քաղաքը, երկիրը: Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ:

Արդի դպրոցին պետք է ջերմություն, հոգի: Նա պիտի լինի հայրենագիտության տաճար: Սրտի և մտքի կրակով է պետք խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով հայրենիքի պաշտամունքը երեխաների հոգիներում: Պատմությունը բաբախուն սիրտ է: Սիրտ է պետք դնել դասերի մեջ, սիրտ, ոչ թե ցամաք անցքեր, թվեր, անուններ: Մեր նոր սերունդը պետք է դասեր առնի պատմությունից և չմոռանա հերոսների

պատգամը՝ հպարտ զգան, որ հազարամյակների խորքից եկող տաղանդաշատ և ստեղծագործ հայ ժողովրդի զավակներ են:[1]

Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է: Պետական պատվերի հիմքում դրված է հասարակության մեջ այնպիսի քաղաքացու ձևավորման խնդիրը, որն իր դրսևորումներով պիտանի կլինի պետությանը և հասարակությանը: Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության[2]»:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը համաժողովրդական նպատակ դարձնելու համար հարկավոր է.

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- դպրոցական բոլոր հիմնական միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարներ իգործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների առաջավոր մանկավարժական փորձը,
- սովորողների ծնողներին ևս ներգրավել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը խթանելու գործընթացներում:

Այսպիսով, հայրենասիրական դաստիարակությունը պետք է ունենա համաժողովրդական նշանակություն, այստեղ պետք է հստակ երևա դպրոց-ընտանիք ամուր կապը և սովորողի դաստիարակության հենքը երկուստեք պետք է ունենա

[1] http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/05/Joxovacu-Text-354.pdf Ն. Դավթյան, «Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները», Վանաձոր, 2015, էջ 48:
[2] . http://www.hayzinvor.am/33565.html

նույն նպատակը՝ ունենալ հայրենասիրական գաղափարներով տոգորված, ազգի ու հայրենիքի հարկն իմացող սերունդ:

1.2 ՆԶՊ-ն՝ որպես ռազմահայրենասիրական դաստիարակության առարկա

Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների, արժեքների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը:

Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է կառավարել՝ հենվելով իր իմացական ու գործառական ներուժի, ինչպես նաև արժեքային համակարգի վրա: Հենց սրանով է պայմանավորված կրթության արդիականացման գործընթացը, որի հիմնական նպատակն է ունենալ ինքնուրույն, նախաձեռնող, նորարար ու հայրենասեր սովորող: Աստեղ կարևորագույն առաքելություն ունեն հարակրթական ուսումնական հաստատությունը, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը:

Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ

հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[3]: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները. ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի, դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին: Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչում ենք երկու կողմ. սուբյեկտ, այսինքն՝ ուսուցիչը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ աշակերտը, որին սովորեցնում են: Ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսուցման ընթացքում թե' ուսուցիչը, թե' աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են, այսինքն՝ ընդունված սուբյեկտ–օբյեկտ գծապատկերին փոխարինում է սուբյեկտ–սուբյեկտ ժամանակակից գծապատկերը[4]:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման, ռազմահայրենասիրական զգացմունքների արժեվորման: Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին, դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում, ճանաչում ու սիրում

[3] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

[4] Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014, էջ12:

իր հայրենիքը, փորձում ծավալել հայրենասիրական գործունեություն՝ ի շահ հայրենիքի հզորացման:

ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձևավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն)[5]:

Հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ ուսուցիչը լայն հնարավորություններ ունի առարկայի ընթացքում հետաքրքրել սովորողին, ուսուցման գործընթացը կապել կյանքի մի շարք երևույթների ու իրավիճակների հետ, ոչ միայն խոսել հայրենասիրության մասին, այլն նաև ցույց տալ օրինակներով, սովորողի վրա դնել պարտականություններ: Այստեղ շատ կարևոր է նաև ուսումնական առարկայի շրջանակներում իրականացվող արտադասարանական դասերն ու գործնական պարապունքները:

ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում սովորողի մեջ ռազմահայրենասիրական զգացմունքներ դաստիարակելիս ուսուցչի գերխնդիրը ոչ միայն հայրենիքը սիրել տալն է, այլև զարգացողական խնդիրները ձևավորելու, ինքնատիրապետման, անհատականության տեր մարդ, քաղաքացի և մասնագետ ունենալն է: Մանկավարժական դաստիարակությունն օգնում է քննադատաբար յուրացնել

[5] https://escs.am/am/news/7884

անցյալի փորձը, իր ստեղծագերծական գործնեությամբ հարստացնել մարդկության նյութական և հոգևոր արժեքները, սեփական գիտելիքներով ու ներուժով հզորացնել հայրենիքը: Բնականաբար, մարդու ձեռք բերած գիտելիքները կարողություններն ու հմտությունները, նրա ստեղծագործական պոտենցիալը ամենից առաջ ծառայում են իր ժամանակաշրջանի, իր ժողովրդի ու հայրենիքի պահանջներին: Հայ մանկավարժական առաջնակարգ խնդիրներից է շարունակական կրթությունը բոլոր օղակների վերակառուցում՝ ազգային դաստիարակության համամարդկային սկզբունքներին ու գաղափարներին համապատասխան:

Մեր ազգային դաստիարակության ձեռք է բերվելու ոչ միայն աճող սերնդի կրթությունը մայրենի լեզվով իրագործելով, այլև համամարդկային արժեքներին զուգընթաց ազգային նպատակամղվածության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների պատմության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների յուրացմամբ, կարճ ասած՝ ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարք ու բարքի արմատավորմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր հայորդու ինքնատիպ ու առանձնահատկության դաստիարակմամբ: Հայ ժողովրդի նոր սերունդները պետք է պատրաստ և ունակ լինեն լուծելու մեր հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ տնտեսական, գիտատեխնիկական, մշակույթային բոլոր տեսակի առաջադրանքները:

Դաստիարակությունը ծագել է մարդկային ցեղի հանդես գալու հետ մեկտեղ և կգոյատևի նրա հետ հավերժորեն: Նախնադարյան համայնական հասարակարգում դաստիարակությունը կազմել է տոհմի, ավագ սերնդի փորձի փոխանցումը կրտսեր սերնդին: Որսորդները, հողագործները, արհեստագործները և այլ բնույթի աշխատանք կատարողներն իրենց ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները փոխանցում էին կրտսերներին՝ նրանց մասնակից դարձնելով իրենց աշխատանքներին: Այսօր էլ քաղաքակիրթ հայ քաղաքացին կարիք ունի սիրելու, գնահատելու և պաշտպանելու իր տունը, իր երկիրը՝ հետևելով նախնյաց սուրբ օրինակին:

Կյանքում մարդիկ, ավելի հաճախ երիտասարդները, երբեմն շեղվում են հասարակական համակցության ընդունված կանոններից և թույլ են տալիս զանցանքներ, երբեմն էլ հանցանքներ: Այսպիսի դեպքում ընտանիքի անդամները

կրթօջախների աշխատողները, հասարակությունը, պետությունը զբաղվում են զանցառուի կամ հանցագործի վերադաստիարակությամբ: Դաստիարակության գործընթացում արդյունքներն ուղղակիորեն կախում ունեն դաստիարակության տարբեր եղանակների, ձևերի ու մեթոդների ներդաշնակ և ճկուն կիրառումից, և այս համատեքստում առանցքային նշանակություն ունի ՆԶՊ առարկայի ուսուցչի դերակատարումը, ում օրինակելի վարքը, հայրենասիրական մեծ զգացմունքները պետք է ուղենիշ դառնան նոր ու վտանգավոր աշխարհում կյանքի դասեր առնող երիտասարդների համար:

Համակողմանի զարգացած սերունդ ունենալու հանգամանքով պայմանավորված՝ հաճախ դժվար է պատկերացնել խնդրի լուծումը մեկ ուսումնական առարկայի շրջանակներում, ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ: ՆԶՊ առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցիչը հաճախ է ստեղծում միջառարկայական կապեր այլ հայագիտական առարկաների միջև: Այս կերպ հայրենիքի բարոյական նկարագիրը, հաղթանակներն ու պատմության դասերն էլ ավելի ակնառու են դառնում սովորողների համար՝ նպաստելով վերջիններիս հայրենասիրական զգացմունքների արմատավորմանը:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի մյուս երաշխիքը ռազմադաշտային պարապմունքներն են, որոնք անց են կացվում տարբեր զորամասերում: Բանակ-հասարակություն կապի ամրապնդման, աշակերտներին բանակի կյանքին ավելի մոտիկից ծանոթացնելու նպատակով սովորողները հաճախ դասն անցկացնում են դասարանից դուրս՝ իրականացնելով շարային ու գործնական պարապունքներ: Այս համատեքստում վերջիններս ծանոթանում են ինքնաձիգի կառուցվածքին, օգտագործմանն ու անվտանգային խնդիրներին, մասնակցում են հրաձգության պարապունքներին, սովորում են շարային պատրաստության հիմնական կանոնները:

Այս գործնական պարապունքները հատկապես կարևոր են նախազորակոչային տարիքի արական սեռի սովորողների համար, քանի որ այս գիտելիքներն էապես օգնում են վերջիններիս պարտադիր զինվորական ծառայության ժամանակ:

Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս ստանալ նախնական ռազմական գիտելիքներ և դրանք լավագունս կիրառել զինվորական ծառայության ժամանակ: ՆԶՊ առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստելով ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն:

«ՆԶՊ» առարկայի դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- ՀՀ զինված ուժերի և ռազմարվեստի պատմություն
- Մարտավարական հիմունքներ
- Կրակային պատրաստություն
- Համազորային կանոնադրություններ
- Շարային պատրաստություն
- Ռազմական տեղագրություն
- Միջազգային մարդասիրական իրավունք
  առաջին բուժօգնություն

Վերոհիշյալ բաժինները առանձին-առանձին կամ մի քանիսը միասին յուրացվում են դասարանային պայմաններում, որտեղ ապահովվում են միայն տեսական գիտելիքներ, բայց կարող են իրականացվել նաև ռազմամարզական ճամբարներում, որտեղ գիտելիքները ավելի գործնական ու կիրառելի են: ՆԶՊ առարկայից գործնական դասերը սովորողների մեջ զարգացնում են մի շարք կարողունակություններ, որոնցից են.

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,
- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում,
- հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստակամության ձևավորում,

- հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ),
- լեռնային պատրաստության հիմունքների ծանոթացում
- ստեղծագործական ունակությունների, ռազմագիտական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացումը,
- կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը[6]:

Այսպիսով, կարող ենք վստահաբար ասել, որ հանրակրթական դպրոցներում դասավանդվող մնացած առարկաների կողքին իր ուրույն դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունի նաև ՆԶՊ-ն: Մեծ է առարկայի նշանակությունը հատկապես սովորողների հայրենաճանաչության բարձրացման և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

[6] https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

1.3 ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ռազմահայրենասիրական գիտակցության զարգացման մեթոդներն ու եղանակները

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար դպրոցներում հիմք են ծառայում մի շարք ուսումնական առարկաներ, որոնցից են՝ «ՆԶՊ», «ՀԺՊ» և «Ֆիզկուլտուրան»: Դատելով վերոբերյալից՝ կարող ենք կատարել եզրահանգում այն մասին, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության մասով բեռն ընկնում է այդ առարկաները դասավանդող ուսուցիչների վրա: Անտարակուսելի է այն հանգամանքը, որ խնդիրն աստիճանաբար դառնում է ավելի օրհասական: Այս համատեքստում հարկավոր է կարևորել այն հանգամանքը, թե մասնավորապես ՆԶՊ առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցիչն ինչպիսի մեթոդամանկավարժական հնարների է դիմում սովորողին մոտիվացնելու, դեպի դասը վերջինիս հետաքրքրությունն ավելացնելու, պասիվ դաշտից ակտիվ դաշտ բերելու տեսանկյունից:

Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը կրթական համակարգի շահագրգիռ կողմերին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների: Փստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ նորարարական, մեթոդամանկավարժական հետաքրքիր հնարներով հագեցած, դաս սովորողը պահանջում է բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներից՝ այդ թվում ՆԶՊ առարկայի ուսուցչից:

Ստացվում է, որ նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն կտա սովորողին դառնալ դասի ընթացքի կենտրոնական սուբյեկտը, նա կդադարի հիմնականում լսողի իր դերում լինել, կսովորի, կսովորեցնի, կհետազոտի՝ ամրապնդելով մի շարք կենսական նշանակության հմտություններ ու կարողություններ ևս: Այստեղ շատ կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գնահատի առարկայիզ ստացած գիտելիքն ու հմտությունը, նաև ռազմահայրենասիրական զգացմունքների գիտակցումը: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության, առարկայի նկատմամբ հետաքրքրություն դրսևորելու տեսանկյունից, ապա հարկ է

արձանագրել, որ դա մեծապես կախված է ուսուցչի մանկավարժական որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու,
- ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու,
- անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն,
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն,
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն,
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն,
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [7]:

Անուրանալի է դպրոցի դերը, որտեղ սովորողն անցկացնում է իր կյանքի կարևորա գույն տարիների մի մասը և հենց այդ տարիներին էլ նա դառնում է սեռահասուն, առավել գիտակից, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ և որոշակի արժեքներ կրող: Այդ առումով, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելություն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը, արթնացնելու համար հանուն հայրենիքի անգամ անձնազոհության գնալու մղումը: Շատ կարևոր է դպրոցներում նպաստել

[7] http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

աշակերտների գաղափարական պատրաստությանը: Ռազմահայրենասիրությունը սովորողների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է: Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Ապագա հայ զինվորը պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռվել պատմական անարդարության դեմ: Այս առանցքային գաղափարներին հասնելու համար ՆԶՊ-ի դասաժամը պետք է ունենա աշակերտակենտրոն բնույթ, հագեցած լինի փոխգործուն մեթոդական հնարներով, ինչը թույլ կտա սովորողին ազատվել տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, նրանք կսովորեն լսել միմյանց, կարևորել մեկմեկու կարծիքները, կզարգանա նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՆԶՊ-ի ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է ունենալ բարձր արդյունավետություն, եթե ուսուցումը զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում ենք, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն, բանակցեն ու ինքնադրսևորվեն: Ի վերջո հայրենիքը սիրելն ու հարգելը պետք է չպարտադրել, մատաղ սերունդը, վստահաբար, ունի այն մոտիվացիան, որ իր հայրենիքն ամենալավ ու ամենից հարազատ վայրն է աշխարհի երեսին: Եվ որպես եզրափակիչ խոսք՝ հիշենք մեծն բանաստեղծի խոսքերը.

«Ման եկա, մայրի՜կ, աշխարհից աշխարի,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,

Էս գորշ խըրճիթն է, էս հին խըրճիթն է,
Գետի եզերքին, ծառերի տակին»: *Հովհ Թումանյան*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ՆԶՊ առարկայի դասավանդման և այդ համատեքստում ռազմահայրենասիրական դաստիարակության պլանավորման և աշխատանքների կազմակերպման գործում մեծ դեր ունի առարկայի ուսուցիչը՝ զինղեկը, ով իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ , ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում: Կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին: Հենց այս ուսումական առարկան իր բովանդակությամբ և չափորոշչային վերջարդյունքների սահմանված պահանջներով ունակ է սովորողների համար լինել օրինակելի ու հայրենասեր քաղաքացի դաստիարակելու արդյունավետ միջոց: Անդրադառնալով դասավանդման եղանակներին՝ կցանկանանք վերահաստատել մեր այն պնդումը, որ ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով, ուստի կարծում ենք պետք է վերանայել սովորողի դերը դասի ընթացքում: Կարևոր ենք համարում նաև այն միջավայրը, որում աշակերտը իրեն ապահով ու հանգիստ կզգա, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ:

Անշուշտ, մեր թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

Հույս ունենք, որ սույն հետազոտությունը խթան կհանդիսանա մեզ՝ ուսուցիչներիս համար մոտիվացվել դեպի նորը և սովորողների մեջ ավելի բարձր մակարդակի վրա հասցնել սերն ու պատասխանատվության զգացումը դեպի մեր բոլորի հայրենիքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):
2. https://escs.am/am/news/7884 ՀՀ ԿԳՄՍ պաշտոնական կայք

3. http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/05/Joxovacu-Text-354.pdf Ն. Դավթյան, «Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները», Վանաձոր, 2015:
4. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:
5. http://zangak.am/pdf/Mankavarjakan-mitq-2014(3-4).pdf Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014:
6. http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
7. http://www.hayzinvor.am/33565.html «Հայ զինվոր», ՀՀ պաշտպանության նախարարության հանդես: